# <ԱՂԱՍԻ ԽԱՆՋՅԱՆԻՆ>

<…..> երկերը իմ երկերի հետ- ես ֆորմալ նվաճումներով լինելով նրանք մակարդակի գրող, իդեոլոգիայով մի ամբողջ գլուխ <…..>

(հինգ տող անընթեռնելի է)

Համամիութենական պոեզիայի (մի տող անընթեռնելի է)<….>բացակայությունն այս <….> վարագուրվում, որի վրա կուննեա <…..> տալ <…..>պոետները հավատացնում եմ քեզ, որ չկա վսեմափայլ անուն, որ իդեոլոգիապես այնքան մոտ լինի պրոլետարական հեղափոխությանը, որքան ես… Ախր, սա մի փաստ է, որ ոչ ոք չի կարող հերքել: Եթե հիշում ես իմ ելույթը- իմ հիմնական թեզն այն էր, որ մենք, այսպես կոչված «բարձր» արվեստի ներկայացուցիչներս, իզուր ենք գլուխներս թաքցնում «արվեստի բարդության» թեորիայի ետևը, որ մեր <…..> (մեկ տող անընթեռնելի է) վերանհատականն է թե <…..>գլուխները, որ իրեն հերքել <…..> վճարի բարդությունն է բացի <…..> մոտիկության մասին պետք է հրամայել <…..> առնվազն անախրոնիզմ և այլն <…..> Երևակայիր, որ իմ այս ելույթից հետո, Գորկու տանը բանկետի ժամանակ ինձ մոտեցավ Էրենբուրգը Պաստերնակի հետ միասին: Սկսեցին ինձ պախարակել «օպպորտյունիզմի» համար… Ինչ մեղքս թաքցնեմ, ես ևս զգում էի, որ իհարկե իմ ելույթի մեջ կար որոշ օպպորտյունիզմ, անգամ կրկնակին.- պոեզիայի «բարձր» հոսանքի առջև ես ինձ զգում էի «դավաճան», որովհետև համագումարում բոլորն անխտիր համարում էին այդ հոսանքի ներկայացուցիչ…

(երկու տող անընթեռնելի է)

<…..> պրոլետարական (մեկ տող անընթեռնելի է) «ֆրոնտի կտեսնեն» նրանց հանդիպումը <…..> ինչպես գիտես այս «ֆրոնտի» հանդեպ սպառնացել էին «անխառն» և պրոլետարական գրողներ- Դեմյան, Բեզիմենսկի, Պերվոմայսկի (Ուկրաինա), Վշտունի… Բայց ի՞նչ… Կարո՞ղ էի ես ակտիվ կամպանիային միանալ «բարձր» արվեստի ֆրոնտին, որը դրվատում էր ինքը՝ զեկուցողը՝ Բուխարինը, որին միացավ ամբողջ վրացական դեկլարացիան. վերջապես,- ոչ, չէի կարող… ես հիանալի տեսա և հասկանում էի,այս հակադրության գաղափարական իմաստը.- և ես չվարանեցի՝ ընդունելով հանդերձ բարձր արվեստի հետևողականությունը՝ հորդոր կարդալ իմ (երկու տող անընթեռնելի է) Արվեստը.- դժվար թե <…..> թափանցած պրոլետարիա <…..> և կյանքը պատկերացնի <…..> և այն, ինչով դուրս եկավ՝ կրկնակի «օպպորտյունիզմ» <…..> իմ «բարձր» կոլեգաները «մեղադրեցին ինձ», որ ես ինքս լինելով «բարձր» արվեստագետ ռեվերանս եմ անում «իդեոլոգիայի առջև»,- իսկ

«պրոլետարականներն» ինձ ողջունելով հանդերձ (ես չեմ մոռանա մանավանդ Ֆանի «զարմանքը».- նրան ինչպես երևում էր մեր «պրոլետարականները» (Վշտունին, Նաիրին) այնքան էին լարել իմ դեմ, որ նա լինելով այդ նիստի նախագահողը՝ փաստորեն տապալեց իմ ելույթը՝ տալով ինձ վերջին ձայնը, որից հետո դահլիճը համարյա դատարկվեց, բայց իմ ելույթից հետո <նույն>հրաբորբոք հայացքով «ֆիզիքապես» զարմացած մոտեցավ ինձ և երկար թափահարելով իմ ձեռքը (հինգ տող անընթեռնելի է)<…..> ական անգետը պրոլետարական գրականության մեջ և այլն… և այս ձևով (<բառացի> ողջունելով հանդերձ «պրոլետարականները» այնուամենայնիվ ինձ մեղադրում էին այն բանում, որ «ես չեմ հրաժարվում իմ «բարձր» կոլեգաներից ամբողջությամբ… Շարունակում եմ <…..> Եվ այսպես ես դուրս եկա կրկնակի «օպպորտյունիստ», սակայն ես իմ ողջ էությամբ զգում էի, որ եթե իմ գրվածքները ծանոթ լինեին բոլորին՝ ապա ամենայն իրավունքով ես պիտի կարողանայի հանդիսանալ և ցուցադրվել իբրև խորհրդային գրողի համեմատաբար <…..>,- այսինքն իբրև (երեք տող անընթեռնելի է) Լենինյան դարաշրջանի <…..> Ես բոլորովին <…..> չեմ կարող <…..>, որովհետև հիանալի, <…..> досконально գիտեմ, թե ինչ է ներկայացնում այսօրվա խորհրդային պոեզիան թե իբրև ձև և թե իբրև բովանդակություն… Այս տեսակետից ես չէի Վարդանի ոչ Պաստերնակի, ոչ Տիխոնովի, ոչ Բաժանի, ոչ Ցաշվիլու կամ այլ պոետների հետ, այսինքն այսօրվա խորհրդային պոեզիայի ամենակարևոր պոետների.- սակայն, Աղասի, եթե դու առիթ ունեցել ես ծանոթանալու պոետներին, ապա պետք է իմանաս, որ սրանք լինելով <…..> խոսքի (վեց տող անընթեռնելի է) որքան հայտնի է («Բալակը իր պոետներ<ին> զանգատ չէր անի»)- ինձ ֆիզիկապես!!! (մեկ տող անընթեռնելի է) պոետների ամենա <…..> հոխորտանքը՝ ես սրանց պարզ համեմատությամբ ոչ միայն խորհրդային <…..> պրոլետարական գրող եմ՝ իմ որևէ <…..><ստեղծագ>ործությունների իդեալական բովանդակությամբ.- իմ բոլոր սխալներով և <շեղու>մներով հանդերձ ես ողջ խորհրդային <…..> միակ պոետն եմ, որ՝ գրական կուլտուրայով <…..>իրենելով խորհրդային պոեզիայի վերստին տալ առաջնակարգ պլեադային՝ (չորս տող անընթեռնելի է) կլիներ նրա կյանքը <…..> լիներ այսպես <…..> փնտրում <…..>злодей, образной <…..> раз я помню <…..> по <…..> Сплет <…..> вообще <…..> այսպես էր արտահայտվել և այն էլ գրավոր! Պարզ <…..> ցար Նիկոլայ I-ի հասցեին… Էլ ի՞նչ սրտով Նիկոլայը նրան <…..> Պատկերացրու ցարի հասցեին- և ոչ թե, ասենք որևէ գավառային ցենզորի հասցեին <…..> Մի՞թե իմ հանցանքն ավելի է մեծ…

1935թ. 10/VI-ի

(Պահպանվել են նաև այս նամակի առանձին

թերթիկներ՝ առանց հերթականության)

<…..> ու գնում շուտ, տխուր կլիներ ենթ<աղրել>, որ նրանց բոլոր սխալները չվերագրվեին կուսակցությանը… ծայրահեղ դեպքում իմ դժգոհությունը դժգոհություն էր և իմ սովորական անձնավորության դեմ, ընդամենը մի <…..> վարիչի դեմ, որի <…..> դեմ «արտահայտվելը» ոչ մի դեպքում չպետք է ընդունվի իբրև արտահայտություն սիստեմի, իշխանության և կուսակցության դեմ… Երբեմն ինձ պետք է <…..> թյան միչ <…..> տվին, թե միմի <…..> չեն ընդունում, որ իմ բողոքը <…..> արտահայտեմ <…..> բողոք է պետ <…..> այի <…..> (երեք տող անընթեռնելի է):

Նույնիսկ այս դեպքում ո՞րն է իմ հանցանքի աններելիությունը… Մի՞թե Լևոն Արիսյանը իր պերսոնայով մարմնացնում է խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը… Ենթադրենք, որ ես հայհոյել եմ նրան և անգամ այն միտքը հայտնել, թե նման տիպերին վատ չի լինի «տալ սատկացնել»,- սրանով ես դարձա խորհրդային իշխանության թշնամի՞… Մի՞թե խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը պատասխանատու է Լևոն Արիսյանի յուրաքանչյուր քայլի համար:

Եթե այդպես լիներ, ապա կուսակցությունը պետք է իրեն պատասխանատվության կանչեր յուրաքանչյուր «քյալլագյոզի՞»… ծիծաղելի է այսպես մտածել <…..> է և <…..> կուսակց (երկու տող անընթեռնելի է):

Աղասի!

Հանուն ինչի՞ եք դուք ենթարկում նման հասարակական օստրակիզմի: Մի՞թե ես այնքան եմ մեղավոր խորհրդային սիստեմի առջև, որ իմ անունն անգամ հարկավոր է ջնջել խորհրդային գրականությունից… Մի՞թե ես արդեն դադարել եմ խորհրդային գրող լինելուց, որ դուք հայ խորհրդային պոեզիայի դեկլարացիա եք կազմում առանց ինձ, ջնջում եք իմ անունը և դեկլարացիայի <…..> ինչի՞ն կներկայանա ասեք ռուս գրական <հասարակ>այնությունը, որ ես իբրև <…..>րայային <…..> վտարվում եմ <գրականու>թյունից <…..> սա ճի՞շտ <…..> սա դեռ հանրապետական (երկու տող անընթեռնելի է) լիներ, հավատա, որ ես առաջինը կլինեի ուրախացողներից, բայց, ավա՜ղ, այսպես չի… Այս է ահա, որ դառնացնում է ինձ, և միմիայն այս… Որքան էլ մեծ լինի իմ հանցանքը- մի՞թե դրանով իմ երկերը գնահատվում են հակախորհրդային… Չէ

որ աբսուրդ է սա, բացարձակ աբսուրդ… Բայց այս վերաբերմունքը չխանգարեց <…..> դարձնելու համար <…..> Իմ ամենամեծ հանցանքը <…..> Ես <…..> զրույցի ժամանակ, մի <…..>, որ են ան <…..> (երկու տող անընթեռնելի է) անհրաժեշտ եմ գտնում հայտնել, որ նույն այդ Նշան Մակինցը շատ ավելի արմատական է եղել ինձ հետ ունեցած իր զրույցների ժամանակ, քան մեղավորս… Արմատական այն իմաստով, որ եթե ես մեր իրականության այս կամ այն հոռի կողմը վերագրել եմ կոնկրետ անձնավորությունների գործելակերպին, ապա նա միշտ և միշտ փորձել է համոզել ինձ, որ ոչ թե անձնավորություններն են մեղավոր, այլ սիստեմը, դիկտատուրան, <…..> կյան և պետական դաժան <…..> լացիան:- Ես միշտ առարկել եմ դրա դեմ, առաջադրելով այն կարծիքը, որ միևնույն սիստեմում <…..> մի հանրապետության մեջ (երկու տող անընթեռնելի է): <Ոչ թե> Նշան Մակինցին պատասխանատվության կանչելու և նրանից ինչ-որ ոխ հանելու համար, այլ պարզապես ցույց տալու համար, որ որպիսի հարաբերություններ են եղել մեր միջև,- որ ես նրա ներկայությամբ անգամ արտառոց միտք հայտնելու դեպքում <…..> երբեք չեմ մտածել, որ նա դրանից կարող է հանել պաշտոնական եզրակացություններ: Ես <…..> նման բան ասած լինեի որևէ <…..> անվանի, որևէ <պատուհասելու>: Դուք լիակատար իրավունք կա <…..> քաղաքական <…..> սակայն տվյալ (մեկ տող անընթեռնելի է) անհանդուրժելի մտքեր,- ուրեմն իմ ամենամեծ հանցանքն այն է, որ ես նման մի «բարեկամի» հետ ունեցած անձնական զրույցում հայտնել եմ այն միտքը, որ Արիսյանի նման վնասակար անձնավորություններին հարկավոր է «տալ սատկացնել», որպեսզի նրան հետևողներ չլինեն: Այս է եղել ահա իմ ամբողջ մեղքը.- ըստ որում յուրաքանչյուր անաչառ մարդու համար պետք է միանգամայն պարզ լինի, որ <…..> բարեկամին ինտիմ ընկերական <զրույցի> ժամանակ <…..> գրոհել ջղայնացած <…..> պահին հայտնում <…..> նման միտքը <…..> ի՞նչ է, եթե ոչ (երեք տող անընթեռնելի է) լինելուց: Եթե նման անձնական զրույցների հիման վրա պետությունը սկսեր հետապնդումներ կատարել, ապա ես համոզված եմ, որ անգամ կուսակցությունների մեծ տոկոսը պետք է այսօր աքսորում լինեին: Հենց առաջինը ինքը՝ Նշան Մակինցը:- Երդվում եմ Լենինի անվամբ, որ ամենասրբազան բանն է իմ իդեական աշխարհում (համոզված եմ, որ սրա դեմ չեն կարող առարկել անգամ իմ ամենաոխերիմ թշնամիները)- երդվում եմ ահա Լենինի սրբազան անվամբ, որ նա <…..> Ես չգիտեմ դեպք Նշան Մակինցի <…..> փոխի <…..>թշնամական զգա <…..> ավ էր շատ <հա>վատում եմ նրան <…..> մանր, քան թե (երկու տող անընթեռնելի է):

<…..> Սահակ Տեր-Գաբրիելյանը- իսկ կուլտուրայի վարիչ Լևոն Արիսյանը երկու ա<միս> շարունակում ձգձգում էր գրքի լույս ընծայումը… Որ իմ ներկայությամբ Սովնարկոմի նախագահը պաշտոնապես կարգադրել է 10 օրվա ընթացքում լույս

ընծայել գիրքը (Չոփուրյանին)- իսկ Լևոն Արիսյանը կանգնեցրել է այդ և 2 ամիս ձգձգելուց հետո բարեհաճել է «թույլ տալ» ճիշտ նույն բովանդակությամբ, ինչ բովանդակությամբ որ կարգադրում էր լույս <ընծայել> Սովնարկոմի նախագահը <.....> գնացի Լևոն Արիսյանի <.....> Կենտկոմի և Սովնարկոմի, նույնիսկ <.....> և «խորհրդային իշխանու<թյան>: Այս ամենով <.....> ևս (երկու տող անընթեռնելի է) հասկանալ… Նման դեպքի համար կամ այդպիսի դեպքում կարելի է խիստ նկատողություն անել և այլն… մանավանդ, որ գոյություն չունի ոչ մի լուրջ փաստ, որ տվյալ դեպքում գործ ունենք լուրջ, կոնկրետ, ռեալ քաղաքական գործելակերպի հետ,- էլ ինչպես կարելի է նման անիմաստ կազմակերպչական եզրակացություններ հանել մի պոետի վերաբերյալ <.....> իրականում ես, <.....> Աղասի, որը սակայն մի խալտուրա <.....> չի՞ հայհոյելու համար դրա <.....> գրազները և <.....> կմնա <.....> Ո՞վ է, որ <.....> չունի (չորս տող անընթեռնելի է):